



# ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ը. Տարի, Թի 4, Ապրիլ 2025



## ՊԱՀՔԸ ԱՌԻԹ՝ ՀՈԳԵՒՈՐ ԲՈՒԺՄԱՆ ԵՒ ՄԱՔՐԱԶԱՐԴՄԱՆ

Ամեն տարի Մեծ Պահոց շրջանը առիթ է կ'ընծայի իրաքանչիւր հաւատացեալի, հոգեւոր ճանապարհորդութեան մը մեկնելու: Սակայն, միաժամանակ կը յիշեցնէ մեզի, որ պահեցողութիւնը պարզապէս աւանդութիւն մը եւ կամ սովորութիւն մը չէ, այլ հոգեւոր մաքրագարդման եւ վերանորոգման միջոց է:

### 1. Պահքը առիթ՝ հոգեւոր ճամբորդութեան:

Մեծ Պահքը ժամանակահատուած մըն է, այն ճամբորդութեան, որ մեզ դէպի հոգեւոր վերածնունդ կ'առաջնորդէ: Եթէ դիմենք Աստուածաշունչին, առաւել եւս կը հասկնանք որ պահքը մեր հայեացքը կը դարձնէ դէպի իսկական ճանանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը, մեզ կը մօտեցնէ Աստուծոյ: Ծամբորդութիւն մը, որ մեզի կը սորվեցնէ ապաւինիլ միայն Աստուծոյ, ազատագրուելու համար աշխարհիկ հոգերու ճնշիչ ծանրութենէն: Եսայի մարգարէն իր 58րդ գլխուն մէջ կը նկարագրէ ճշմարիտ ծոմապահութեան պատկերը ըսելով. «Այս է իմ ընտրած ծոմապահութիւնս, որ անիրաւութեան կապանքները քակես, լուծին կապերը տկարացնես, հարստահարածներուն ազատ արձակես, հացդ անօթիին հետ բաժնես, անտունները տունդ ընդունիս, մերկը հագուստով ծածկես» (Եսայի 58.6):

### 2. Պահքը առիթ՝ մաքրագարդման եւ հոգեւոր բուժման:

Պահքը որպէս առաջին պատուիրան, ի սկզբանէ տրուեցաւ Ադամին ու Եւային դրախտային երանական կեանքին մէջ: Հետեւաբար, մենք որպէս հոգեւոր ժառանգութիւն ունինք եւ մեր մէջ արմատաւորուած է որպէս միջոց հնազանդութեան եւ կարգապահութեան: Այնպէս ինչպէս ծուլարանը մետաղը կը գտէ, նոյն ձեւով ալ պահքը մեր հոգիները կը մաքրէ, մեզի աւելի ուժեղ եւ հաւատարիմ կը դարձնէ մեր Տիրոջ Երկնաւոր հօր հետ:

### 3. Պահքի փոխակերպիչ ուժը:

Պահեցողութեամբ Քրիստոս կը փոխէ մեր ներաշխարհը, եւ մենք մեր կարգին կանչուած ենք Անոր լոյսը արտացոլացնելու մեզ շրջապատող աշխարհին մէջ:

Հետեւաբար, պահեցողութիւնը շատ աւելին է քան որոշ կերակրատեսակներէ հեռու մնալը: Հոգեւոր մաքրագարդման առիթ է, հոգեւոր ճամբորդութիւն, վերանորոգման միջոց եւ դէպի բժշկութիւն տանող ուղի է: Այո՛, պահքը կը վերանորոգէ եւ հոգեւորապէս արթուն կը պահէ մեզ եւ բնականաբար կը չեզոքացնէ մեր մէջ տեղ գտած յոռի սովորութիւններն ու մոլութիւնները, կը վանէ չարը եւ մեր յարաբերութիւնը կը սերտացնէ Աստուծոյ հետ:

Մէկ խօսքով, պահքը հնարաւորութիւն կուտայ մեզի որ թոյլատրենք Յիսուսի Քրիստոսի մեր սրտերը վերափոխելու, եւ մենք մեր հերթին բուժուած եւ մաքրագարդուած սրտով փոխակերպելու մեզ շրջապատող աշխարհը:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Երբ կը պատրաստուինք տօնելու մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառաւոր Յարութիւնը, կ'անդրադառնանք, թէ Անոր յաղթանակը մահուան վրայ միայն անցեալի պատմական իրադարձութիւն չէ. անիկա կենդանի իրականութիւն մըն է, որ մինչեւ այսօր կը փոխակերպէ մեր կեանքը: Պատմութիւնը ոչ միայն կը վկայէ Քրիստոսի աստուածային էութիւնը, այլեւ կը հաստատէ յաւիտենական խոստումը՝ վերանորոգութեան, յոյսի եւ յաղթանակի բոլոր այն բաներուն վրայ, որոնք կը ձգտին մեզ ընկճել:

Ժամանակակից այս աշխարհին մէջ յաճախ ծանրաբեռնուած կը զգանք անորոշութիւններով, հակամարտութիւններով եւ տառապանքներով: Յաճախ ընտանեկան դժուարութիւնները, համայնքային մարտահրաւերները եւ որպէս ազգ մեր դիմագրաւած փորձութիւնները մեզ յուսահատութեան կը տանին: Բայց Յարութեան պատգամը ուղղակիօրէն կը խօսի մեր սրտին: Խաւարը վերջին խօսքը չունի, եւ յուսահատութիւնը երբեք պատմութեան ւարտը չէ: Աշակերտներն ալ յուսալքուեցան, երբ Քրիստոս ձերբակալուեցաւ եւ ապա խաչուեցաւ: Անոնք կարծեցին, թէ ասարտն էր ամէն ինչի: Յարութիւնը դարձաւ սկիզբը, իրաքանչիւր աւարտի: Ինչպէս Քրիստոս յարութիւն առաւ գերեզմանէն, այնպէս ալ մենք կոչուած ենք մեր դժուարութիւններուն մէջ վեր բարձրանալու՝ հաւատքով եւ քաջութեամբ:

Յարութեան զօրութիւնը կը գործէ մեր կեանքին մէջ, երբ ընտրենք հաւատքը՝ վախի՛ն փոխարէն, ներումը՝ զայրոյթի՛ն փոխարէն, եւ սէրը՝ ատելութեան փոխարէն: Ան ներկայ է այն ատեն, երբ կը զօրակցինք տառապողներուն, երբ բարութիւն կը ցուցաբերենք կարիքաւորներուն եւ երբ մեր քրիստոնէական ինքնութիւնը անշեղ կը պահենք՝ հակառակ աշխարհիկ ճնշումներուն: Որպէս հայ քրիստոնէաներ, մեր պատմութիւնը նշանաւոր է տոկունութեամբ, որ կազմաւորուած է այն հաւատքով, թէ Քրիստոսի միջոցով, նոյնիսկ ամէնէն մութ՝ խաւարած ժամանակներուն, միշտ նոր կեանքի ուղի մը կայ՝ կայ նոր արշալոյս մը:

Յարութեան տօնի շեմին, վերանորոգենք մեր յանձնառութիւնը՝ ապրելու իբրեւ Յարութեան ժողովուրդ: Թող Քրիստոսի շնորհած ուրախութիւնն ու յոյսը լուսաւորեն մեր ճանապարհը եւ ներշնչեն մեզ՝ Անոր սիրոյ գործիքները դառնալու: Որքան ալ անորոշ կամ դժուար կ'երեւին մեր օրերը, դատարկ գերեզմանը մեզի կը յիշեցնէ, որ Քրիստոս յարեաւ, եւ Անոր հետ մենք եւս յարութիւն պիտի առնենք: Իր յաղթանակը, իրաքանչիւր Քրիստոնէայ անհատի յաղթանակն է: Անոր յաղթանակը, մահուան պարտութիւնն է:

Քրիստոսի սէրը եւ խաղաղութիւնը բոլորիս հետ ըլլայ:

Հայր Յակոբ

## ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Անիկա է մեր մեղքերը քառող Զոհը, որ ինքզինք մատուցանեց՝ մեր մեղքերը սրբելու համար. եւ ոչ միայն մեր, այլ նաեւ ամբողջ աշխարհի մեղքերը սրբելու համար» (Ա. Յովհաննէս 2:2):

“And Christ himself is the means by which our sins are forgiven, and not our sins only, but also the sins of everyone.” (1 John 2:2)





## ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ... ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ, ԴՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉՈՒԱԾ ԵՍ

«Հոգեւոր մարդիկ խիստ փորձութիւններու կ'ենթարկուին, որոնց աղբիւրը սկզբնական մեղքն է»:

### ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կինը իր ամուսինին հետ համաձայնաբար մէկ կը դառնայ: Սակայն ժամանակ կու գայ, որ անոնք բաժնուին, որովհետեւ կրնայ պատահիլ, որ մէկը մեռնի եւ միւրը ապրի: Այս հաղորդակցութեան կը նմանի նաեւ Սուրբ Հոգիին մարդուն հոգիին հետ ունեցած հաղորդակցութիւնը, որոնք մէկ հոգի կ'ըլլան, որովհետեւ գրուած է. «Ով որ Տիրոջ միանայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ» (Ա. Կր 6:17): Ասիկա կը պատահի, երբ մարդը շնորհքով կը լեցուի եւ ամէն կողմէ անով կ'ողողուի:

3.- Կան նաեւ անոնք, որոնք աստուածային քաղցրութիւնը ճաշակելով հանդերձ, տակաւին հակառակորդին ազդեցութեան ենթակայ կը մնան եւ յաճախ իրենց փորձառութեան պակասին պատճառով ալ կը զարմանան կատարուածին վրայ, թէ ինչպէս Աստուծոյ շնորհքը ստանալով հանդերձ, տակաւին քրիստոնէական հաւատքին վերաբերող խորհուրդներուն նկատմամբ կասկածներ կ'ունենան: Մինչ անոնք, որոնք հասուն են, բնաւ չեն զարմանար սոյն երեւոյթին համար: Ճիշդ փորձառու հողամշակներու նման, որոնք առատութեան ժամանակ միշտ զգաստ եւ զգոյշ կ'ըլլան՝ երաշտի եւ սղութեան օրերուն մասին մտածելով եւ, միւս կողմէ ալ, երբ այդ օրերը վրայ հասնին, չեն յուսահատիր, որովհետեւ կ'ակնկալեն, որ ապագային շատ անելի դրական եւ լաւ փոփոխութիւն պիտի ունենան: Նոյնն է նաեւ հոգեւոր կեանքի պարագային, երբ «մարդ զանազան փորձութիւններու մէջ ինչայ, չի զարմանար եւ չի յուսահատիր, որովհետեւ քաջ գիտէ, որ փորձութիւնները յատուկ թոյլտուութեամբ կը պատահին, հաւատքի մէջ անելի հաստատուելու եւ դաստիարակուելու համար: Միւս կողմէ ալ, երբ ան հարուստ, բարօր եւ հանգիստ վիճակի մէջ ըլլայ, չի դադրիր զգուշաւոր եւ զգաստ ըլլալէ, այլ միշտ ի մտի կ'ունենայ ապագայի իմաստով վիճակի փոփոխութեան կարելիութիւնները:

Եթէ արեւը, որ արարուած մարմին մըն է, ամենապիղծ, զարշահոտ եւ ապականած վայրերն իսկ կը լուսաւորէ, առանց երբեք այդ վայրերուն յոռի երեւոյթներէն ազդուելու եւ պղծուելու, հապա Սուրբ Հոգին որքան եւ անելի իր մաքրութիւնը կը պահէ մարդկային հոգիին հետ իր հաղորդակցութեան պահուն, երբ վերջինս չարին ազդեցութեան տակ կ'ըլլայ, առանց երբեք անկէ բանով մը ազդուելու. «Լոյսը խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զինք» (Յի 1:5):

**ՄԵԾՆ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ**  
**«ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ»**  
Հայացոյց՝ Մակար Արք. Աշգարեան  
(Շարունակելի 2)

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

Շնորհակալութիւն քեզի, ղվ Աստուած՝ մեր Տէրը, որ քու տեսանելի լոյսովդ ուրախացոցիր մեզ՝ քու բոլոր արարածներդ, իսկ քու պատուիրաններուդ հոգեւոր լոյսովը լուսաւորեցիր քեզի հաւատացողները: Մեզ ալ զօրացուր, Տէր, որպէսզի կարենանք քու պատուիրաններդ պահել այսօր եւ ամէն ատեն, որպէսզի լուսաւորուած միտքով՝ միշտ քու կամքդ կատարենք եւ պատրաստած բարիքներուդ հասնինք բոլոր սուրբերուդ հետ միասին, մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհքովն ու մարդասիրութեամբը: Անոր կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: Ամէն:

Դրն էս մեր խաղաղութիւնն ու կեանքը, ղվ Միածին Որդի Աստուծոյ, մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Տնոր մեզի քու խաղաղութիւնդ, որ սուրբ առաքելներուդ շնորհեցիր՝ անոնց վրայ փչելով կենդանացնող եւ ամենազօր քու Սուրբ Հոգիդ: Որպէսի մենք ալ աշխարհէն եկող ամէն տեսակի փորձութիւններէն խաղաղած՝ տաճար եւ բնակարան դառնանք աստուածային շնորհքներուդ, եւ շնորհակալութեամբ փառաւորենք քեզ՝ ղվ Քրիստոս, մեր Աստուածը, Հօրը եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: Ամէն:

Ժամագիրք

## THE PRAYER OF THE HEART

HESYCHASTIC PRAYER, WHICH leads to that rest where the soul can dwell with God, is prayer of the heart. For us who are so mind-oriented it is of special importance to learn to pray with and from the heart. The Desert Fathers can show us the way. Although they do not offer any theory about prayer, their concrete stories and counsels offer the stones with which the later Orthodox spiritual writers have built a very impressive spirituality. The spiritual writers of Mount Sinai, Mount Atos, and the startsi of nineteenth-century Russia are all anchored in the tradition of the desert. We find the best formulation of the prayer of the heart in the words of the Russian mystic Theophan the Recluse: "To pray is to descend with the mind into the heart, and there to stand before the face of the Lord, ever-present, all-seeing, within you." All through the centuries, this view of prayer has been central in hesychasm. Prayer is standing in the presence of God with the mind in the heart; that is, at that point of our being where there are no divisions or distinctions and where we are totally one. There God's Spirit dwells and there the great encounter takes place. There heart speaks to heart, because there we stand before the face of the Lord, all-seeing, within us.

We have to realize that here the word heart is used in its full biblical meaning. In our milieu, the word heart has become a soft word. It refers to the seat of the sentimental life. Expressions such as "heartbroken" and "heartfelt" show that we often think of the heart as the warm place where the emotions are located in contrast to the cool intellect where our thoughts find their home. But the word heart in the Jewish-Christian tradition refers to the source of all physical, emotional, intellectual, volitional, and moral energies.

From the heart arise unknowable impulses as well as conscious feelings, moods, and wishes. The heart, too, has its reasons and is the center to good decisions. Thus the heart is the central and unifying organ of our personal life. Our heart determines our personality, and is therefore not only the place where God dwells but also the place to which Satan directs his fiercest attacks. It is this heart that is the place of prayer. The prayer of the heart is a prayer that directs itself to God from the center of the person and thus affects the whole of our humanness.

One of the Desert Fathers, Macarius the Great, says, "The chief task of the athlete [that is, the monk] is to enter into his heart." This does not mean that the monk should try to fill his prayer with feeling, but that he should strive to let his prayer remodel the whole of his person. The most profound insight of the Desert Fathers is that entering into the heart is entering into the Kingdom of God. In other words, the way to God is through the heart. Isaac the Syrian writes: "Try to enter the treasure chamber ... that is within you and then you will discover the treasure chamber of heaven. For they are one and the same. If you succeed in entering one, you will see both. The ladder to this Kingdom is hidden inside you, in your soul. If you wish your soul clean of sin you will see there the rungs of the ladder which you may climb." And John Carpathios says: "It takes great effort and struggle in prayer to reach that state of mind which is free from all disturbance; it is a heaven within the heart [literally 'endocardial'], the place, as the Apostle assures us, 'where Christ dwells in us' (2 Cor 13:5)."

The Desert Fathers in their sayings point us toward a very holistic view of prayer. They pull us away from our intellectualizing practices, in which God becomes one of the many problems we have to address. They show us that real prayer penetrates to the marrow of our soul and leaves nothing untouched. The prayer of the heart is a prayer that does not allow us to limit our relationship with God to interesting words or pious emotions. By its very nature such prayer transforms our whole being into Christ precisely because it opens the eyes of our soul to the truth of ourselves as well as to the truth of God. In our heart we come to see ourselves as sinners embraced by the mercy of God. It is this vision that makes us cry out, "Lord Jesus Christ, Son of the living God, have mercy on me, a sinner." The prayer of the heart challenges us to hide absolutely nothing from God and to surrender ourselves unconditionally to his mercy.

Thus the prayer of the heart is the prayer of truth. It unmasks the many illusions about ourselves and about God and leads us into the true relationship of the sinner to the merciful God. This truth is what gives us the "rest" of the Hesychast. To the degree that this truth anchors itself in our heart, we will be less distracted by worldly thoughts and more single-mindedly directed toward the Lord of both our heart and the universe. Thus the words of Jesus, "Happy the pure in heart: they shall see God" (Matthew 5:8), will become real in our prayer. Temptations and struggles will remain to the end of our lives, but with a pure heart we will be restful even in the midst of a restless existence.

This raises the question of how to practice the prayer of the heart in a very restless ministry. It is to this question of discipline that we must now turn our attention.

**THE WAY OF THE HEART**  
**Henri J. M. Nouwen**





## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

### ԱՒԱԳ ՇԱՐԲԱԹ

Ասագ Շարբաթ կը նշանակէ մեծ շարբաթ, որովհետեւ Փրկչին Յարութեան շարբաթն է կամ եօթնեակը:

Ասագ շարբաթն ընդ օրերը նուիրուած դն անտարանական յիշատակներու.

- Երկուշաբթի՝ Չորցած Թզենիին,
- Երեքշաբթի՝ Տասը Կուսանաց,
- Չորեքշաբթի՝ Քրիստոսի օժման՝ կնոջ ձեռքով,
- Հինգշաբթի՝ կը բաժնուի երեք հիմնական ժամերու՝
  - Սուրբ Հաղորդութեան Պատարագ
  - Կարգ Ոտնլուայի
  - Խաարում՝ Մատնութիւն
- Ուրբաթ՝ Խաչելութեան եւ Թաղման,
- Շաբաթ՝ Ճրագալոյց:

### ՉԱՏԻԿ

Փրկչին Յարութեան նուիրուած մեծ տօնն է: Չատիկ բառը հաւանաբար կը նշանակէ զենի կամ զենեալ գառնուկ, ոչխար՝ որ հրէից Պասեքի սեղանին կերակուրն էր:

Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ ալ Չատիկին գառնուկ կ'ուտէին:

Չատիկն յատկանշական ուտելիքը՝ կարմիր հալիթն է, իբրեւ խորհրդանշան Փրկչին թափած արիւնին խաչին վրայ եւ Իր Յարութեան:

### ՅԻՍՆԱԿ | ՅԻՆՈՒՆՔ (ՅԻՆԱՆՑ)

Չատիկէն մինչեւ Համբարձում 40 օր է. այս միջոցն ալ կոչուած է Քառասունք Յարութեան, ինչպէս որ Մեծ Պահքը կը կոչուի Քառասունք Ապաշխարութեան: Դարձեալ, Չատիկէն մինչեւ Հոգեգալուստ կամ Պենտեկոստէ՝ յիսուն օրերու միջոցը կը կոչուի ՅԻՆՈՒՆՔ, ինչպէս որ Ծնունդը կանխող յիսուն օրերը կ'ըսուին ՅԻՍՆԱԿ:

### ՅԻՆԱՆՑ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

#### ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱԶԱՏԻԿ

Փրկչին Յարութենէն ամէն բան կը նորոգուի եւ քրիստոնէութեան համար Նոր Կիրակի մըն է, ինչպէս նաեւ Կրկին Չատիկ:

#### ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ

Աշխարհամատուռն կը նշանակէ բոլոր քրիստոնէաներու մատուռը, Երուսաղէմի առաջին Եկեղեցին, որ կազմակերպուեցաւ Առաքեալներու ձեռքով: Իսկ Կանաչին հնախօսութիւնը ծանօթ չէ, բայց կ'երեւի թէ նոր կանաչացած, ծաղկած Եկեղեցին կը յիշատակուի ատով:

#### ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Յետ յարութեան Փրկչին երեւումներուն յիշատակին, որով կը հաստատուի իր արիւնով ծաղկեալ Եկեղեցին:

Տաղի մը մէջ կ'ըսուի.

- Կարմիր անուանի
- Օրն այս նագելի,
- Ձի Տէրն երեւի
- Որպէս ի Չատիկի,
- Օրըն Կիրակի:
- Եւ այն զի կոչի
- Կարմիր Կիրակի,
- Եւ յոյժ պատշաճի
- Ձի արեամբ ծաղկի:

### ԵՐԵՒՄԱՆ ԽԱԶ

Չատիկի Ե. Կիրակին կը տօնուի Խաչին երեւումը, պարզապէս Երեւման Խաչ բացատրութեամբ:

Երուսաղէմի Կիւրեղ Պատրիարքի ժամանակ խաչանման լուսաւորաշ երեւոյթ մը տեղի կ'ունենայ Սիոնի վրայ եւ Կիւրեղ այդ երեւոյթը նամակով մը կը նկարագրէ Կոստանդին Բ. Կայսեր 337-ին:

### ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

Չատիկ եօթներորդ Կիրակին կը կոչուի ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ, որովհետեւ ինչպէս որ Բուն Բարեկենդանէն մինչեւ Ծաղկազարդ Քառասունք մըն է, այսպէս ալ Չատիկէն մինչեւ Յինանց է. Կիրակին Քառասունք մըն է եւ այս Կիրակին Ծաղկազարդի յատուկ շարականներու ընթերցուածներ կը կրկնուին նոյնութեամբ, ի յիշատակ Փրկչին գալստեան:

Այս Կիրակին կոչուած է նաեւ Մեծահրաշի Կիրակի, որովհետեւ օրուան Օրհնութեան շարականը Մեծահրաշ այս խորհուրդ բառերով կը սկսի, որուն մէջ կ'երգուի Լուսաւորչի խոր Կիրակ գտնուած միջոցին Հրեշտակի հետ ունեցած խօսակցութեան անհնդութիւնը:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ԲԱՐԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

## THE PRAYER OF THANKSGIVING

We thank thee, O Father almighty, who didst prepare for us the holy Church for a haven, a temple of holiness, wherein the name of the holy Trinity is glorified. Alleluia.

We thank thee, O Christ the king, who didst grant unto us life by thy life-giving and holy body and blood; vouchsafe unto us forgiveness and thy great mercy. Alleluia.

We thank thee, O Spirit of Truth, who hast renewed the holy Church. Keep her without blemish by the faith in the Trinity, from henceforth for everyone. Alleluia.

THE DIVINE LITURGY  
OF THE ARMENIAN APOSTOLIC  
ORTHODOX CHURCH

## THE BOOK OF 1 KINGS


WRITTEN: PROBABLY AROUND 650-530BC

### WHY READ IT?

While many of the kings got things wrong, the book gives some examples of brilliant kings who demonstrated what it means to follow God in a tricky world. This was a pretty dark time for God's people, but even when things appeared to be at their worst, and God seemed to be very quiet, he had not forgotten them. He was waiting in the wings to make it all right again.

### WHAT YOU NEED TO KNOW:

2 Kings continues from where 1 Kings left off. When the prophet Elijah was taken to heaven, Elisha took up his ministry. Many Kings continued to make bad choices until, finally, God's people were conquered. First the northern kingdom of Israel fell to the Assyrians. Later, the southern kingdom of Judah fell to the Babylonians, and the capital city of Jerusalem came under Babylonian rule. At this point, many of God's people were captured and taken to Babylon as slaves – a really important event known as the exile. The nation of Israel rose to power after escaping from Egypt, but then returned to slavery as God removed his protection from them.



## THE LETTER OF COLOSSIANS

WRITTEN: AROUND AD 62-64 (OR POSSIBLY LATER IN THE FIRST CENTUARY)

### WHAT YOU NEED TO KNOW:

This letter was written to a church in the city of Colossae (in modern-day Turkey). At the time, the people in the church were hearing and believing a whole bunch of untrue teachings. These teachings included the idea that there was a way to salvation other than Jesus, and that Christians needed to obey Jewish laws and ways of living. They were also beginning to worship angels. As a result, Paul wrote this letter, reminding the believers to focus on Jesus. He explains Jesus' victory over darkness and how we should live, while stamping out the confusion caused by false teaching.

### WHY READ IT?

Colossians is a great letter, full of strong basic truths about the good news of Jesus. It reminds us to keep our focus on him, and it outlines the importance of not just believing the right things but doing the right things too.

### SPOTLIGHT:

The Colossians were people from Colossae. Earlier in its history (before this letter was written), Colossae had been a rich city, as it lay on a trade route, so people from all over the world would pass through. All of these people brought with them their own religions, creating a city that was a melting-pot of ideas about faith, with bits and pieces of beliefs that come from all over the place. This is perhaps why Paul felt a need to write to the Colossian Church.



